ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ
ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Պ-619-15.05.2020,11.09.2020-ՏՏԳԲ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական ոչ առեւտրային կազմակերպությունների մասին» 2001 թվականի հոկտեմբերի 23-ի ՀՕ-248 օրենքի.

1. 16-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Գործադիր մարմնի պաշտոնում կարող է նշանակվել Հայաստանի Հանրապետության այն գործունակ չափահաս քաղաքացին, որն ունի բարձրագույն կրթություն եւ առնվազն երեք տարվա համապատասխան բնագավառի մասնագիտական աշխատանքային ստաժ, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:»

2. 16-րդ հոդվածը լրացնել նոր 1.1-ին, 1.2- րդ, 1.3-րդ, 1.4-րդ, 1.5-րդ, 1.6-րդ,1.7-րդ, 1.8-րդ, 6.1-ին եւ 6.2-րդ մասերով.

«1.1. Պետական կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնում նշանակվում են մրցույթի արդյունքում:

1.2. Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Հարցազրույցի ամբողջ ընթացքը տեսանկարահանվում է:

1.3. Պետական կազմակերպության գործադիր մարմնի թափուր պաշտոնը համալրելու համար անցկացվող մրցույթի թեստավորման փուլը հաղթահարած մասնակիցները հարցազրույցի ժամանակ մրցութային հանձնաժողովին են ներկայացնում իրենց կողմից մշակված համապատասխան պետական կազմակերպության զարգացման եւ բարեփոխման հայեցակարգ:

1.4. Պետական կազմակերպությունների գործադիր մարմինների մրցույթի ընտրության (նշանակման) ընդհանուր կարգը եւ չափորոշիչները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, բացառությամբ՝ օրենքով սահմանված դեպքերի:

1.5. Մինչեւ գործադիր մարմնի թափուր պաշտոնի համար մրցույթ հայտարարելը եւ անցկացնելը պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող անձը թափուր պաշտոնում ժամանակավոր պաշտոնակատար նշանակում է սույն օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները բավարարող անձի կամ կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված լինելու դեպքում՝ գործադիր մարմնի տեղակալին մինչեւ վեց ամիս ժամկետով:

1.6. Եթե գործադիր մարմնի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթը համարվում է չկայացած, ապա ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնավարման ժամկետը կարող է երկարաձգվել պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող անձի որոշմամբ՝ սույն հոդվածի 1.5.-րդ մասով սահմանված ժամկետը չգերազանցող ժամկետով:

1.7. Պետական կազմակերպության գործադիր մարմնի թափուր պաշտոնը կարող է ժամանակավորապես զբաղեցնել տվյալ պաշտոնի համար հայտարարված մրցույթի հավակնորդներին ներկայացվող պահանջները բավարարող անձը:

1.8. Պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող անձը պահպանելով սույն օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները՝ պետական կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնում որոշակի ժամկետով կատարում է նշանակում գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձի՝

1) հղիության եւ ծննդաբերության արձակուրդի դեպքում.

2) մինչեւ երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդի դեպքում.

3) պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու դեպքում.

4) իր ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակավոր անհնարինության դեպքում.

5) օրենքով սահմանված այլ դեպքերում:

6.1. Նախնական մասնագիտական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության գործադիր մարմնի պաշտոնում ընտրությունը (նշանակումը) իրականացվում է «Նախնական մասնագիտական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքին եւ դրանից բխող ենթաօրենսդրական իրավական ակտերին համապատասխան:

6.2. Հանրակրթության ոլորտի պետական ուսումնական հաստատության գործադիր մարմնի պաշտոնում ընտրությունը (նշանակումը) իրականացվում է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքին եւ դրանից բխող ենթաօրենսդրական իրավական ակտերին համապատասխան:»

3. 16-րդ հոդվածի 3-րդ մասի՝

1) «է» կետում «հինգ» բառը փոխարինել «մեկ» բառով:

2) «ժգ» կետում «օրենքի» բառը փոխարինել «օրենսդրության» բառով:

Հոդված 2. Եզրափակիչ եւ անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո երկու ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է պետական կազմակերպությունների գործադիր մարմինների մրցույթի, ընտրության (նշանակման) ընդհանուր կարգը:

ՏԵՂԵԿԱՆՔ ՆԱԽԱԳԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական ոչ առեւտրային կազմակերպությունների մասին» 2001 թվականի հոկտեմբերի 23-ի ՀՕ-248 օրենքի.

~~1)~~ 1. 16-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Գործադիր մարմնի պաշտոնում կարող է նշանակվել Հայաստանի Հանրապետության այն գործունակ չափահաս քաղաքացին, որն ունի բարձրագույն կրթություն եւ առնվազն ~~երկու~~ երեք տարվա համապատասխան բնագավառի մասնագիտական աշխատանքային ստաժ, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:»

~~2)~~ **2.** 16-րդ հոդվածը լրացնել նոր 1.1-ին, 1.2- րդ, 1.3-րդ, 1.4-րդ, 1.5-րդ, 1.6-րդ,1.7-րդ, 1.8-րդ, 6.1-ին եւ 6.2-րդ մասերով.

«1.1. Պետական կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնում նշանակվում են մրցույթի արդյունքում:

1.2. Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Հարցազրույցի ամբողջ ընթացքը տեսանկարահանվում է:

1.3. Պետական կազմակերպության գործադիր մարմնի թափուր պաշտոնը համալրելու համար անցկացվող մրցույթի թեստավորման փուլը հաղթահարած մասնակիցները հարցազրույցի ժամանակ մրցութային հանձնաժողովին են ներկայացնում իրենց կողմից մշակված համապատասխան պետական կազմակերպության զարգացման եւ բարեփոխման հայեցակարգ:

1.4. Պետական կազմակերպությունների գործադիր մարմինների մրցույթի, ընտրության (նշանակման) ընդհանուր կարգը եւ չափորոշիչները ~~(բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի) սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:~~ սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, բացառությամբ՝ օրենքով սահմանված դեպքերի:

1.5. Մինչեւ գործադիր մարմնի թափուր պաշտոնի համար մրցույթ հայտարարելը եւ անցկացնելը պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող անձը թափուր պաշտոնում ժամանակավոր պաշտոնակատար նշանակում է սույն օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները բավարարող անձի կամ կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված լինելու դեպքում՝ գործադիր մարմնի տեղակալին մինչեւ վեց ամիս ժամկետով:

1.6. Եթե գործադիր մարմնի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթը համարվում է չկայացած, ապա ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնավարման ժամկետը կարող է երկարաձգվել ~~Հայաստանի Հանրապետության կառավարության~~ պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող անձի որոշմամբ՝ սույն հոդվածի 1.5.-րդ մասով սահմանված ժամկետը չգերազանցող ժամկետով:

1.7. Պետական կազմակերպության գործադիր մարմնի թափուր պաշտոնը կարող է ժամանակավորապես զբաղեցնել տվյալ պաշտոնի համար հայտարարված մրցույթի հավակնորդներին ներկայացվող պահանջները բավարարող անձը:

1.8. ~~Պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող անձը պետական կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնում որոշակի ժամկետով կատարում է նշանակում գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձի՝~~

Պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող անձը պահպանելով սույն օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները՝ պետական կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնում որոշակի ժամկետով կատարում է նշանակում գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձի՝

1) հղիության եւ ծննդաբերության արձակուրդի դեպքում.

2) մինչեւ երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդի դեպքում.

3) պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու դեպքում.

4) իր ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակավոր անհնարինության դեպքում.

5) օրենքով սահմանված այլ դեպքերում:~~»։~~

«6.1. Նախնական մասնագիտական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության գործադիր մարմնի պաշտոնում ընտրությունը (նշանակումը) իրականացվում է «Նախնական մասնագիտական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքին եւ դրանից բխող ենթաօրենսդրական իրավական ակտերին համապատասխան:»

«6.2. Հանրակրթության ոլորտի պետական ուսումնական հաստատության գործադիր մարմնի պաշտոնում ընտրությունը (նշանակումը) իրականացվում է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքին եւ դրանից բխող ենթաօրենսդրական իրավական ակտերին համապատասխան:»

~~3) 16-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետից հանել « եւ նրա դատվածությունը մարված կամ~~

~~հանված չէ» բառերը:~~

~~4)~~ 4. 16-րդ հոդվածի 3-րդ մասի՝

1) «է» կետում «հինգ» բառը փոխարինել «մեկ» բառով:

2) «ժգ» կետում «օրենքի» բառը փոխարինել «օրենսդրության» բառով,~~ իսկ «կրկնակի» բառը հանել:~~

Հոդված 2. Եզրափակիչ եւ անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո ~~մեկ~~ երկու ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է պետական կազմակերպությունների գործադիր մարմինների մրցույթի, ընտրության (նշանակման) ընդհանուր կարգը:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-619-15.05.2020,11.09.2020-ՏՏԳԲ-011/1) ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

	Առաջարկության, փոփոխության (լրացման) հեղինակը	**Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը**	**Առաջարկությունը փոփոխությունը (լրացումը)**	**Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի եզրակացությունը)**	**Առաջակությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ Հանձնաժողովի որոշումը**
1	**2**	**3**	**4**	**5**	**6**
	ՀՀ կառավարություն	«Պետական ոչ առեվտրային կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերնագիր (Պ-619-15.05.2020,11.09.2020-ՏՏԳԲ-011/1)	Նախագծի վերնագրում «փոփոխություն» բառը փոխարինել «փոփոխություններ» բառով:	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն	Ընդունվել է
	ՀՀ կառավարություն	«Պետական ոչ առեվտրային կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերնագիր (Պ-619-15.05.2020,11.09.2020-ՏՏԳԲ-	Նախագծի 1-ին հոդվածի 1-ին կետի 1-ին մասում «երկու» բառը փոխարինել «երեք» բառով: «Համապատասխան» բառից հետո լրացնել	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն	Ընդունվել է

		011/1)	«բնագավառի» բառը:		
	«Լուսավոր Հայաստան» խմբակցություն	«Պետական ոչ առեվտրային կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի՝ 2-րդ կետում 1.2-րդ մաս (Պ-619-15.05.2020,11.09.2020-ՏՏԳԲ-011/1)	**Նախագծի 1-ին հոդվածի՝** **2-րդ կետում 1.2.-րդ մասը** լրացնել՝ «Հարցազրույցի ամբողջ ընթացքը տեսանկարահանվում է:» նախադասությամբ:	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն	Ընդունվել է
	ՀՀ կառավարություն	«Պետական ոչ առեվտրային կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի՝ 2-րդ կետի 1.4-րդ մաս (Պ-619-15.05.2020,11.09.2020-ՏՏԳԲ-011/1)	**Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետի 1 . 4-րդ մասում** «(բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի) սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:» բառերը փոխարինել (սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, բացառությամբ՝ օրենքով սահմանված դեպքերի:» բառերով:	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն	Ընդունվել է
	ՀՀ կառավարություն	«Պետական ոչ առեվտրային կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի՝ 2-րդ կետի 1.5-րդ մաս (Պ-619-	**Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետի 1 . 5-րդ մասում** «նշանակում է» բառից հետո լրացնել «սույն օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները բավարարող	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն	Ընդունվել է

		15.05.2020,11.09.2020-ՏՏԳԲ-011/1)	անձի կամ կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված լինելու դեպքում՝ գործադիր մարմնի տեղակալին» բառերը:		
	ՀՀ կառավարություն	«Պետական ոչ առեվտրային կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի՝ 2-րդ կետի 1.6-րդ մաս (Պ-619-15.05.2020,11.09.2020-ՏՏԳԲ-011/1)	**Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետի 1 . 6-րդ մասում** «Հայաստանի Հանրապետության կառավարության» բառերը փոխարինել «պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող անձի» բառերով:	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն	Ընդունվել է
	ՀՀ կառավարություն	«Պետական ոչ առեվտրային կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի՝ 2-րդ կետի 1.8-րդ մաս (Պ-619-15.05.2020,11.09.2020-ՏՏԳԲ-011/1)	**Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետի 1 . 8-րդ մասի 1-ին նախադասությունը** շարադրել հետևյալ կերպ «1.8. Պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող անձը պահպանելով սույն օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները՝ պետական կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնում որոշակի ժամկետով կատարում է նշանակում գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձի՝»	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն	Ընդունվել է
	ՀՀ կառավարություն	«Պետական ոչ առեվտրային կազմակերպությունների մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի	**Օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի «ժգ»** կետից «,իսկ «կրկնակի» բառը հանել:» բառերը հանել:	Ընդունվել է, կատարվել է համապատասխան	Ընդունվել է

		«ժգ» կետ		փոփոխություն	
	Նախագծի հեղինակներ	«Պետական ոչ առեվտրային կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մաս (Պ-619-15.05.2020,11.09.2020-ՏՏԳԲ-011/1)	**Նախագծի 2-ին հոդվածի՝** 2-րդ մասում՝ «մեկ» բառը փոխարինել «երկու» բառով:	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն	Ընդունվել է
	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մաս	**Լրացնել «որը տիրապետում է գրական հայերենին»**	Չի ընդունվել	Չի ընդունվել
	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մաս	**«6 ամիս ժամկետով» բառերը փոխարինել «3 ամիս ժամկետով» բառերով**	Չի ընդունվել	Չի ընդունվել
	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդվածի 3-րդ մաս	**Նախագծից հանել 1-ին հոդվածի 3-մասը**	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն	Ընդունվել է
	Նախագծի հեղինակներ	Նախագծի 1-ին հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ մասեր	**Համարակալումը համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջին**	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն	Ընդունվել է